Հետաքրքրական է այն, որ եկեղեցում դեռ պատարագը չսկսած բոլոր տներում ճրագ են վառում։

Միւս առաւօտեան Քրիստոսի սուրբ մկրտութեան ժամերգութիւնն սկսւում է շատ շուտ և աւարտւում է առաւօտեան շատ կանուխ, որից յետոյ քահանաներն սկսում են տնօրհնէք մանգալ։

Զրօրհնութեան հանդէսը, ինչպէս ամեն տեղ, այստեղ էլ կատարում են վալելուչ հանդիսով պղնձէ ամանների մէջ և ժողովուրդը մեծ ջերմեռանդութեամբ խռնելով՝ օրհնւած ջուրը տուն է տանում ամաններով և պահում ամբողջ տարին և գործածում իրրև դեղ ու դարման։

Ծննդեան շաբաթւայ ժամանակամիջոցին տղամարդիկ շրջում են տները և միմեանց շնորհաւորում.—«Շնորհաւոր ըլի ծնունդը և մկրտութիւնը Քրիստոսի», որին պատասխանւում է.—«Օրհնեալ է մկրտութիւնը Քրիստոսի». ապա թէյ են խմում և կերակուր ուտում։

Տեառնընդառաջ։* Փէրիացիները հայոց այդ կռապաշտական հետաքրքրական հին սովորութեան «Դրբընդէզ» են ասում։ Այդ օրը երեկոյեան նորափեսաները մի-մի հատ մոմ վերցնելով գնում են եկեղեցի և ժամերգութեան ներկայ լինում։ Ժամերգութիւնից յետոյ, նրանք եկեղեցու ջահի մոմից կպցնում են մոմերը, դուրս բերում և հէնց եկեղեցու հաշտում ցախից (վառելիք) խարոյկ կազմելով՝ կպցնում են եկեղեցում վառած մոմով և ուրախանում։ Այնուհետև գիւղականները կրակից վերցնելով տանում են իրենց տները, ուր ցախից խարոյկ կազմելով՝ կպցնում եկեղեցուց բերած կրակով. ապա երեք անգամ ցատկում են խարոյկի վրայով և զւարճանում, իսկ կրակի մոխիրն ածում են հաւատունը,

---

* Հայերը հեթանոսութեան շրջանում մեծ տօներ ունէին, որոնց հետ սերտ կապած էին ու տօնում էին մեծ հանդիսով և ուրախութիւններով, և որոնցից բաժանելը հեթանոս հայերի համար դժուար էր. ահա այդ հանգամանքն ի նկատի ունենալով Գրիգոր Լուսաւորիչը՝ հեթանոսական մեծ տօների տեղ որոշեց տօնել Քրիստոսի կեանքի նշանաւոր դէպքերը. այսպէս, նա Տեառնընդառաջի տօնը որոշեց տօնել Մրիրի տօնի ժամանակ։